**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«19» հունիսի 2025 թվականի N 761**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՕՂԱԿԱՅԻՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36/7 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Արկադյա Մանուկյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 29042025-07-0072 վկայական*)* ***ք. Չարենցավան Օղակային փողոց թիվ 36/7*** հասցեում գտնվող 78.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 62.2 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Արկադյա Մանուկյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Ավտոտնակի 1 քառակուսի մետրի համար՝ 1970 (հազար ինը հարյուր յոթանասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Արկադյա Մանուկյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 156000 (մեկ հարյուր հիսունվեց հազար) դրամ՝ ավտոտնակի գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 277000 (երկու հարյուր յոթանասունյոթ հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում ***Արկադյա Մանուկյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Արկադյա Մանուկյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«18» հունիս 2025 թվականի N 760**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակչի դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

Հովհաննիսյան Ռուզաննա AV0526913 20000 դրամ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«18» հունիսի 2025 թվականի N 759**

**ԸՍՏ ՕՐԵՆՔԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՎԿԱՅԱԳՐԻ ԳԵՎՈՐԳ, ԿԱՐԻՆԵ ԵՎ ԳԱՅԱՆԵ ԿԱՐԱՊԵՏՅԱՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, համաձայն «Գեոկադ 55» ՍՊԸ-ի կողմից հաստատված հատակագծի և կադաստրային կոմիտեում հաշվառված չափագրման տվյալների մուտքագրման 2025HSN3FY ծածկագրի, հաշվի առնելով, որ նշված հողամասը չի դասվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք՝ ***որոշում եմ.***

1. Ճանաչել Գևորգ, Կարինե և Գայանե Կարապետյանների կողմից 07-015-0125-0018 ծածկագրով 500 քմ մակերեսով հողատարածքից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 15.1 քմ մակերեսով հողամասի նկատմամբ սեփականության իրավունքը:
2. 07-015-0125-0018 ծածկագրով հողատարածքը հասցեավորել «**Չարենցավան համայնք գյուղ Արզական, Ամառանոցային թաղամաս, 4-րդ փողոց, թիվ 57**»:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» հունիսի 2025 թվականի N 758**

## ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի» մասին օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով և հիմք ընդունելով քաղաքացի Արտաշ Ալեքսանդրի Խաչատուրյանի 2025 թվականի հունիսի 16-ի դիմումը /մուտք 3101/07/ ***որոշում եմ.***

1.Արտաշ Ալեքսանդրի Խաչատուրյանի դիմումի հիման վրա հարուցել վարչական վարույթ և իրականացնել քննարկում **2025 թվականի հունիսի 27-ին, ժամը 11:00-ին,** ք. Չարենցավան, Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1 հասցեում, Չարենցավանի համայնքապետարանի շենքում /նիստին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով/:

2.Սույն որոշումն օրենքով սահմանված կարգով և ժամկետում ծանուցել քաղաքացի **Արտաշ Ալեքսանդրի Խաչատուրյանին**:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունիսի 2025 թվականի N 757

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 04-Ի ԹԻՎ 267 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի փետրվարի 04-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին**» թիվ 267 որոշման 1-ին կետում «**45.2**» թիվը փոխարինել համապատասխան «**54.0**» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«18» հունիսի 2025 թվականի N 756**

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 02-Ի ԹԻՎ 993 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ղեկավարի 2024 թվականի հուլիսի 02-ի «**Համայնքային հողամասում գտնվող ինքնակամ կառուցված ավտոտնակը համայնքային սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին**» թիվ 993 որոշման 2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝
«Ավտոտնակի սպասարկման նպատակով առանձնացված 28.27 քմ մակերեսով՝ բնակավայրերի խառը կառուցապատման նշանակության հողատարածքի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ որպես բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
**«18» հունիսի 2025 թվականի N 755**

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Վահագն Մկրտչյան Ավետիքի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 12-րդ շենք թիվ 1 բացվածքում գտնվող 39,5քմ մակերեսով առևտրի օբյեկտում ոգելից խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3129 /12 առ 2025 թվականի հունիսի 18-ի):

Հաշվի առնելով, որ ըստ N6128 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երկրորդ եռամսյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ որոշում եմ.

1. ***Վահագն Մկրտչյան Ավետիքի*** անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան քաղաք 6-րդ թաղամաս 12-րդ շենք թիվ 1 բացվածքում գտնվող առևտրի օբյեկտում ոգելից խմիչքների իրացում (Թույլտվություն N259):

2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման և եկամուտների հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ Charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունիսի 2025 թվականի N 754

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 30-Ի ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ, 34-րդ հոդվածներով և քննարկելով Չարենցավան քաղաքի 5-րդ թաղամասի 1-ին շենքի 39 բնակարանի բնակիչ Նորիկ Բաբկենի Հովհաննիսյանի 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 3114/11 դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Չարենցավանի քաղաքապետի 1997 թվականի հուլիսի 30-ի «Չարենցավանի մի խումբ բնակիչներին ժամանակավոր տարածք հատկացնելու մասին» թիվ 20 որոշման առաջին կետում **«Հովհաննիսյան Նորայր Բաբկենի»** բառերը փոխարինել համապատասխան **«Հովհաննիսյան Նորիկ Բաբկենի»** բառերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«18» հունիսի 2025 թվականի N 753**

**ՌԱԶՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասի իրավական կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունված օրենքի 7-րդ հոդվածով և «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ, հաշվի առնելով, որ սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել Ռազմիկ Ավետիսյանի սեփականության իրավունքը 07-015-0140-0010 կադաստրային ծածկագրով 0.06413 հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի և մինչև 15.05.2001թ.-ը կառուցված 247"9 քմ ընդհանուր մակերեսով բնակելի տան նկատմամբ:
2. Նշված հողատարածքը հասցեավորել որպես ***«Չարենցավան համայնք գյուղ Արզական Ամառանոցային թաղամաս Այգեգործական փողոց 4-րդ փակուղի թիվ 8»:***
3. Հողամասի սահմանները որոշվում են <<Յարդ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված և Չարենցավան համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

---

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«18» հունիսի 2025 թվականի N 752**

## ՄԵԼԱՆՅԱ ՕՆԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի և 39-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով Մելանյա Օնիկի Մարգարյանի դիմումը (մուտք՝ 2025 թվականի հունիսի 13-ի թիվ 3092/11), հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 17-ի թիվ 21 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Թույլատրել **Մելանյա Օնիկի Մարգարյանին** /ծնված՝ 20.04.1963թ./ կնքելու իր խնամարկյալ **Վանիկ Զորակի Մարգարյանին** /ծնված՝ 19.11.1984թ./ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող /հիմք՝ N 089987 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի վկայական/ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամասի 14-րդ շենքի թիվ 15 հացեում գտնվող անշարժ գույքի՝ բնակարանի օտարման գործարք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելանյա Օնիկի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**


**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«18» հունիսի 2025 թվականի N 751**

**ԱՆԳՈՐԾՈՒՆԱԿ ՎԱՆԻԿ ԶՈՐԱԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ, 34-րդ, 36-րդ և 37-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, հիմք ընդունելով Վանիկ Զորակի Մարգարյանին անգործունակ ճանաչելու մասին ՀՀ Կոտայքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2024 թվականի դեկտեմբերի 27-ի օրինական ուժի մեջ մտած վճիռը, հաշվի առնելով Չարենցավան քաղաքի 2-րդ թաղամաս, 14-րդ շենք բնակարան 15 հասցեի բնակիչ Մելանյա Օնիկի Մարգարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. 1984 թվականի նոյեմբերի 19-ին ծնված անգործունակ ***Վանիկ Զորակի Մարգարյանի*** նկատմամբ խնամակալ նշանակել մորը՝ 1963 թվականի ապրիլի 20-ին ծնված ***Մելանյա Օնիկի Մարգարյանին:***
2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին՝ իրականացնել վերահսկողություն Մելանյա Օնիկի Մարգարյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մելանյա Օնիկի Մարգարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)4 34 34 charentsavan.kotayk@mta.gov.am


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**«17» հունիս 2025 թվականի N 750**

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՏՎԱԾԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով Չարենցավան համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 18-ի թիվ 15-Ն որոշումը, Չարենցավան համայնքի սոցիալապես անապահով բնակիչների դիմումները սոցիալական աջակցություն ստանալու մասին, ***որոշում եմ.***

1. Չարենցավան համայնքի ներքոհիշյալ սոցիալապես անապահով բնակիչներին հատկացնել ֆինանսական օգնություն՝ «Այլ նպաստներ բյուջեից» սինթետիկ հաշվից.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Միրզաջանյան | Կարինե | AX0395194 | 25000 | դրամ |
| Գևորգյան | Ալեքսան | AU0437498 | 15000 | դրամ |
| Ազարյան | Ռոզա | AU0279025 | 15000 | դրամ |

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ      Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«17» հունիսի 2025 թվականի N 749**

### ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով, Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 731-Ն, 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով՝ ***որոշում եմ***.

1. Ճանաչել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում Վաչիկ Գրիգորյանի կողմից ինքնակամ կառուցված 34.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը և ներկայացնել պետական գրանցման՝ համաձայն «Չափչին» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023NJ5VCW ծածկագրի:
2. Ավտոտնակի սպասարկման նպատակով հատկացնել 24.7 քմ մակերեսով՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածք:
3. Ընդունել ի գիտություն, որ՝
   1) Շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:
   2) Շինությունը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա:
   3) Շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Օրինական ճանաչված շինությունը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասը հասցեավորել ***ք. Չարենցավան Մ. Խորենացու փողոց 2-րդ փակուղի թիվ 1/18*** հասցեով:
5. Սույն որոշումը սահմանված կարգով ենթակա է գրանցման ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ում:
6. Սույն որոշումը գրանցումից հետո առաջարկել ինքնակամ կառույցն իրականացրած ***Վաչիկ Գրիգորյանին՝*** գնման նախապատվության իրավունքով ձեռք բերելու շինությունը և նրանով զբաղեցրած հողատարածքը:
7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**
**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**16 հունիսի 2025 թվականի N 748**

## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ 3-ՐԴ ԹԱՂԱՄԱՍԻ ԹԻՎ 25 ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ, ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՄԻԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ԱՌԱՋԱՑԱԾ ՄԻԱՎՈՐԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշման 25-րդ կետի և 32-րդ կետի ա/,բ/ ենթակետերի պահանջներով, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման դրույթներով, առաջնորդվելով «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 46-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Հ. Ներսիսյանի 2025 թվականի ապրիլի 21-ի թիվ 2315/07 դիմումը՝ ***որոշում եմ***.

Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 25 բազմաբնակարան բնակելի շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ, ինչպես նաև շենքի օրինական ճանաչված կցակառույցների պարագծով դրա տակ գտնվող 07-007-0048-0068 ծածկագրով 946.7 քմ հողամասը, հաստատված հատակագծի համաձայն, անհատույց, ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով փոխանցել բազմաբնակարան շենքի բնակարանների և ոչ բնակելի տարածքների սեփականատերերին:

1" Տալ համաձայնություն սեփականության իրավունքով Հովհաննես և Շուշանիկ Ներսիսյաններին պատկանող ք. ***Չարենցավան 3-րդ թաղամաս 25-րդ շենք թիվ 31 և ք. Չարենցավան 3-րդ թաղամաս 25-րդ շենք թիվ 32 բնակարանները*** միավորել՝ դարձնելով մեկ միավոր և հասցեավորել որպես ***ք. Չարենցավան 3-րդ թաղամաս 25-րդ շենք թիվ 31-32 բնակարան***:

1. Ճանաչել օրինական Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 25 բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ կառուցված շինությունները:
2. Ընդունել ի գիտություն, որ Չարենցավան քաղաքի 3-րդ թաղամասի թիվ 25 շենքում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքում ինքնակամ իրականացված կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
3. Սահմանել, որ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով Հովհաննես և Շուշանիկ Ներսիսյաններին պատկանող 3-րդ թաղամասի 25-րդ շենքի թիվ 31-32 բնակարանին կցակառույց 55.6 քմ արտաքին մակերեսով օրինական ճանաչված շինության, ինքնակամ բացված 1 դռան համար 30 օրյա ժամկետում Չարենցավան համայնքի 900135101559 հաշվարկային հաշվին 37000 ՀՀ դրամ չվճարելու դեպքում սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝համաձայն «Մափինգ» ՍՊԸ-ի կողմից հաստատված հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման 2023Y5VWZB ծածկագրի:
5. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակկոմունալ տնտեսության բաժնի պետ Բ. Բալբաբյանի վրա:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ**

**ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**«16» հունիսի 2025 թվականի N 747**

**ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ ԿԱՄ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

***Գրետա Մովսիսյան Նորիկի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Բջնի 1-ին փողոց թիվ 23 շինության տարածքում գտնվող 42,39քմ մակերեսով առևտրի օբյեկտում, ոգելից և ակոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3104/12 առ 2025 թվականի հունիսի 16 -ի):
Հաշվի առնելով, որ ըստ N 002749 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի երկրորդ կիսամյակի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 20-ի N 106-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Գրետա Մովսիսյան Նորիկի*** անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի երկրորդ կիսամյակի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք գ. Բջնի 1-ին փողոց թիվ 23 շինության տարածքում գտնվող առևտրի օբյեկտում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների կամ ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների (բացառությամբ բժշկական նշանակության ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների) կամ ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառք (Թույլտվություն 258):
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Վ. Բարսամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
## ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք**
**Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1**
**Հեռ.՝ (0226)43434 Էլ. փոստ charentsavan.kotayk@mta.gov.am**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**«16» հունիսի 2025 թվականի N 746**

**ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՔԱՂԱՔ ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 1/10 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, Հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշումների, հաշվի առնելով ***Վահրամ Մարգարյանի*** համաձայնությունը՝ ***որոշում եմ.***

1.Օրինական ճանաչված Չարենցավան համայնքի սեփականություն հանդիսացող հիմք՝ N 05062025-07-0176 վկայական) ***ք. Չարենցավան Երիփասարդության փողոց թիվ 1/10*** հասցեում գտնվող 14.77 քմ արտաքին մակերեսով շինությունը /խորդանոց/ և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված 14.8 քմ մակերեսով հողատարածքը գնման նախապատվության իրավունքով ուղղակի վաճառքով օտարել կառույցն իրականացրած ***Վահրամ Մարգարյանին:***

2.Ուղղակի վաճառքի գները սահմանված են հետևյալ հաշվարկով.

1) Շինության /խորդանոց/ 1 քառակուսի մետրի համար՝ 3940 (երեք հազար ինը հարյուր քառասուն) դրամ (տարածագնահատման 11-րդ գոտի):

2) առանձնացված հողամասի 1 քառակուսի մետրի կադաստրային արժեքը՝ 4450 (չորս հազար չորս հարյուր հիսուն) դրամ:

3. ***Վահրամ Մարգարյանը*** պարտավոր է վճարել.

1) համայնքապետարանի 900135101559 հաշվեհամարին՝ 59000 (հիսունինը հազար) դրամ՝ շինության /խորդանոց/ գինը.

2) համայնքապետարանի 900135101484 հաշվեհամարին՝ 66000 (վաթսունվեց հազար) դրամ՝ հողամասի գինը:

4. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի պետական գրանցման համար համայնքապետարանի 900135101211 հաշվեհամարին վճարել 30000 (երեսուն հազար) դրամ:

5. Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների և տուրքերի վճարումը կատարվում է ***Վահրամ Մարգարյանի*** կողմից:

6. Հանձնարարել Չարենցավանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, ճարտարապետության, գյուղատնտեսության և բնակարանային կոմունալ տնտ. բաժնի պետ ***Բենիկ Բալբաբյանին*** ինքնակամ կառույցն իրականացրած անձի կողմից սույն որոշման 1-ին կետում նշված կառույցի և դրա համար առանձնացված հողամասի օտարման համար համայնքի ղեկավարի անունից ***Վահրամ Մարգարյանի*** հետ կնքել անշարժ գույքի և հողատարածքի օտարման պայմանագիր:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«13» հունիսի 2025 թվականի N 745

## ԺԱՆՆԱ ՍԱՐԳՍԻ ԴԱՐԲԻՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 43-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման, հիմք ընդունելով Ռաֆայել Ալբերտի Դարբինյանի դիմումը /մուտք՝ 10.06.2025թ., համար 3052/14/, հաշվի առնելով Չարենցավան համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2025 թվականի հունիսի 13-ի թիվ 19 նիստի արձանագրությունը, ***որոշում եմ.***

1. ***Ժաննա Սարգսի Դարբինյանի*** /ծնված՝ 25.12.1950թ./ նկատմամբ պատրոն /օգնական/ նշանակել որդուն՝ ***Ռաֆայել Ալբերտի Դարբինյանին*** /ծնված 03.06.1981թ./:
2. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովին իրականացնել վերահսկողություն Ռաֆայել Ալբերտի Դարբինյանի վրա դրված պարտականությունների կատարման նկատմամբ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՉԱՐԵՆՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնք
Հասցե՝ Կ. Դեմիրճյանի անվ. հրապարակ 1
Հեռ.՝ (0226)43434 Էլ. Փոստ՝ charentsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«13» հունիսի 2025 թվականի N 744**

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

***Զարուհի Ավդալյան Շավարշի*** անհատ ձեռնարկատերը դիմել է իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք, գ. Արզական, Անտառային փողոց 19/6 հասցեում գտնվող 250քմ մակերեսով հյուրանոցային համալիրում, ոգելից և ակոհոլային խմիչքների իրացման թույլտվություն ստանալու խնդրանքով (մտից N3086/12 առ 2025 թվականի հունիսի 13-ի):
Հաշվի առնելով, որ ըստ N16286 անդորրագրի դիմումատուն 2025 թվականի հուլիսի 01-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածի համար կատարել է Չարենցավան համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 15-ի N 8-Ն որոշմամբ նախատեսված վճարումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. ***Զարուհի Ավդալյան Շավարշի*** անհատ ձեռնարկատիրոջը 2025 թվականի հունիսի 01-ից մինչև 2025 թվականի օգոստոսի 31-ի ընթացքում թույլատրել իր գործունեության վայրում՝ Չարենցավան համայնք, գ. Արզական, Անտառային փողոց 19/6 հասցեում գտնվող հյուրանոցային համալիրում, իրականացնելու ոգելից և ալկոհոլային խմիչքների իրացում (Թույլտվություն N257):
2.Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի առևտրի, սպասարկման, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ
Վ. Բարսամյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Հ. Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ**